Հաստատում եմ

Տնօրեն _____ Բ. Ահարոնյան

«01» 09 2009թ.

ՀՀ ԿԳ նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի

առարկայական մեթոդական միավորման (մասնագիտական խմբի)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

1. Մասնախմբերը ստեղծվում են ուսումնական հաստատություններում ուսումնա դաստիարակչական և արտադրական աշխատանքների արդյունավետ կազմկաերպման նպատակով:
2. Մասնախումբը՝

ա) քննարկում է նոր ծրագրերը, դասագրքերն ու մեթոդական ձեռնարկները, ուսուցիչներին և վարպետներին տալիս երաշխավորություններ,

բ) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում,

գ)նպաստում է ուսուցիչների և մասնագետների /վարպետների/ որակավորման բարձրացմանը,

դ) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ և ոչ մանկավարժական կրթությամբ մանկավարժներին, ոչ մասնագիտական կրթությամբ վարպետներին նախապատրաստում է որակավորման,

ե) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդատվություններ

զ) մանկավարժներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, ընթերցումներ,

է) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,

ը) առաջարկություն է ներկայացնում հաստատության տնօրենին՝ ուսպլանի դպրոցական պարտադիր, նախամասնագիտական և նախասիրական բաղկացուցիչների ժամերի տնօրինման մասին,

թ) կազմակերպում է առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ

Մասնախմբի աշխատանքի կազմակերպումը

3. Մասնախմբերը ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մասնախմբեր հարակից առարկաների ուսուցիչներից:
4. Մասնախմբերի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

Մասնախմբի նիստերն արձանագրում է քարտուղարը: